

**Վարչապետն ընդունել է Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի նախագահին**

<http://gov.am/am/news/item/13275/>

10.11.2017

Վարչապետ Կարեն Կարապետյանն այսօր ընդունել է Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի նախագահ Գուդրուն Մուլեր-Թյորնշտրյումին: Կառավարության ղեկավարը կարևորել է ԵՄ Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի նախագահի այցը և մասնակցությունը Հայաստանում տեղական իշխանությունների 20-ամյակին նվիրված միջոցառմանը: Վարչապետի խոսքով՝ Հայաստանը բարձր է գնահատում ԵՄ հետ համագործակցությունը և ակտիվ մասնակցում է ԵՄ կանոնադրական և խորհրդատվական բոլոր մարմինների, այդ թվում նաև՝ Տեղական ու տարածքային իշխանությունների կոնգրեսի աշխատանքներին:



Տիկին Մուլեր-Թյորնշտրյումն արդյունավետ է համարել ԵՄ Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հետ ձևավորված համագործակցությունը՝ նշելով, որ իրենց համար Հայաստանը վստահելի գործընկեր է: Նա տեղեկացրել է, որ արգասաբեր քննարկումներ է ունեցել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանի հետ, ծանոթ է ոլորտում կատարվող բարեփոխումներին և այդ գործընթացում

աջակցությունը շարունակելու պատրաստակամություն է հայտնել:  
Վարչապետն ու ԵՄ Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի նախագահը մտքեր են փոխանակել Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդման հարցերի շուրջ: Կարեն Կարապետյանը ներկայացրել է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում կառավարության նախաձեռնած բարեփոխումների տրամաբանությունը, որոնց նպատակը համայնքային կառավարման մարմինների մտածելակերպի փոփոխությունն է, դրանց դերի բարձրացումը և որոշումների ընդունման առավել ամուր օղակի ձևավորումը: Կառավարության ղեկավարը շնորհակալություն է հայտնել ոլորտի բարեփոխումներին Կոնգրեսի մշտական աջակցության համար, այդ թվում՝ 2016 թ. ստորագրված Հայաստան-Եվրոպայի խորհուրդ հետմոնիթորինգային երկխոսության ճանապարհային քարտեզի շրջանակում:

**Դավիթ Լոքյան . «ՀՀ նախագահը, երկրի իշխանությունները շահագրգիռ են, որ մեր ՏԻՄ համակարգը կայանա և լիարժեքորեն իր ծառայությունները մատուցի հասարակությանը»**  
<http://mtad.am/hy/news/item/2017/11/10/mtadbacum10/>

10.11.2017

Տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ այսօր Երևանում մեկնարկել է Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում. «Հայացք ապագային. ապակենտրոնացման նոր օրակարգ» խորագրով համաժողովը: Համաժողովին մասնակցելու համար ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանի հրավերով Հայաստան է ժամանել ԵՄ տեղական և տարածքային կոնգրեսի նախագահ Գուդրուն Մուլեր-Թյորնստրյոմը և նրա գլխավորած պատվիրակությունը:

Համաժողովին մասնակցել են ՀՀ մարզպետները, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանը, պետական տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ, համայնքապետեր: Համաժողովը կազմակերպվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, Հայաստանի համայնքների միության և Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի համատեղ ջանքերով՝ Շվեյցարիայի կառավարության ֆինանսավորմամբ: «Հայացք ապագային. ապակենտրոնացման նոր օրակարգ» համաժողովի նպատակն է Հայաստանում տեղական ինքնակառավարման զարգացման հարցերի քննարկման կարևոր և բազմադերակատար հարթակ ձևավորել:



Համաժողովի բացման խոսքում նախարար Դավիթ Լոքյանը շնորհավորելով ներկաներին Տեղական ինքնակառավարման մարմինների օրվա կապակցությամբ, կարևորել է Գուդրուն Մուլեր-Թյորնստրյոմի ներկայությունը: «Տիկին Մուլեր-Թյորնստրյոմի ղեկավարած թիմը, որը ժամանել է մեր երկիր, շատ ինտենսիվ աշխատում է մեր համայնքների հետ և լրջագույն մասնակցություն ունի այն բարեփոխումների ընթացքում, որն իրականացվում է մեր երկրում: Բոլորիս համար հստակ է. ՀՀ նախագահը, երկրի իշխանությունները շահագրգիռ են, որ մեր ՏԻՄ համակարգը կայանա և լիարժեքորեն իր ծառայությունները մատուցի հասարակությանը: Մենք մեր երկրում անսահմանափակ իշխանություն ենք տվել ՏԻՄ-երին, օրենքով ոչ մի մարմին չունի այնպիսի պաշտպանվածություն, ինչպիսին ՏԻՄ-երն են: Այն Հայաստանի կայացած համակարգերից է, որը վերջին 21 տարիների ընթացքում կայունացել է, զարգացել է: Ձևակերպել, որ մենք սրանով ավարտել ենք այն լրջագույն խնդիրները, որոնք մենք ունեինք համայնքներում՝ կարող ենք ասել ոչ: Վերջին շրջանում սկսված բարոփեխումները, ես կարծում եմ, լավագույն ուղիներից մեկն է, որն առաջիկայում համայնքներում պետք է բերի տնտեսության, ծառայությունների բարելավման», - ասել նախարար Լոքյանը: Նրա խոսքով, շատ կարևոր է այն ճանապարհային քարտեզը, որը ստորագրվել է ԵՄ-ի, ԵԽ-ի համապատասխան կառույցների հետ, և այսօր էլ մշտադիտարկում է լինում, թե ինչպես են իրականացվում բարեփոխումները: «Կան շատ թերություններ տեղական ինքնակառավարման համակարգում, բայց Կառավարությունը որդեգրել է բարեփոխումների մի մեծ շղթա, որը մենք իրականացնում ենք և այդ բարեփոխումների արդյունքում մեզ օգնում է ԵԽ կոնգրեսը՝ իր տարածքային և տեղական իշխանությունների համակարգի մակարդակով: Մենք այսօր ստացել ենք որոշակի

օժանդակություններ կատարելու իրավական այնպիսի բարեփոխումներ, որոնք կբերեն դոտացիայի իրական նպատակաուղղմանը համայնքներին, նրա ճշգրիտ հաշվառմանը, սուբվենցիաների տրամադրման մոտիվացիայի ձևավորմանը և այլն: Մենք այսօր փոխում ենք որոշակի մասով տարածքային կառավարման ընդհանուր մոդելը Հայաստանում, այն իր մեջ պարունակում է էլեմենտներ, որը հնարավորություն է տալու որոշակի գործառույթներ փոխանցել համայնքներին: Մենք առաջիկայում ունենալու ենք ուժեղ տարածքային կառավարում, որը դառնալու է հիմնական մեխանիզմը խթանելու համայնքներում համայնքային տնտեսական ծրագրերի ընթացքը, ինչը կընդլայնի համայնքների ֆինանսական ռեսուրսները, կապահովի աշխատատեղեր»,-ասել նախարար Լոքյանը: Շարունակելով խոսքը նա նշել է, որ Տեղական ինքնակառավարման համակարգի կայացումը իր հետ բերել է նաև այդ ոլորտում հասարակական կազմակերպությունների կայացմանը, և նախարար Լոքյանը շնորհավորել է Հայաստանի համայնքների միությանը՝ կազմավորման 20-ամյակի կապակցությամբ, նկատել, որ կազմակերպությունն օգնում է բազմաթիվ հարցերում:



Գուդրուն Մուսլեր-Թորնստրյոմը նույնպես շնորհավորել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը և Համայնքների միությանը, ներկաներին Տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ, ասել, որ այցի ընթացքում արգասաբեր քննարկումներ է ունեցել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանի հետ, ծանոթ է ոլորտում կատարվող բարեփոխումներին և այդ գործընթացում աջակցությունը շարունակելու պատրաստակամություն է հայտնել:

«Ես տեսնում եմ, թե կենտրական և տարածքային իշխանություններն ինչպես են ջանքերը միացնում՝ ուժեղացնելու տարածքային կառավարումը, ինչը ժողովրդավարության համար շատ կարևոր է: Միայն իշխանության մեկ ճյուղը չէ, որ պետք է կառավարի երկիրը: Տեղական ինքնակառավարման մարմինները մշտապես պետք է գտնվեն երկխոսության մեջ մյուս մարմինների հետ: «Հուսով եմք, որ այս համաժողովը կարևոր է երկխոսության համար: Ոչ բոլոր երկրներն են նշում տեղական ինքնակառավարման մարմինների տոնը և, այսպիսով՝ Հայաստանը ներկայացնում է ժողովրդավարությունը համայնքներ բերելու իր հանձնառությունը», -ասել է Գուդրուն Մոսլեր-Թորնստրյոմը: Նա հավասարապես կարևորել է ՏԻՄ-երին խորհրդատվություն ներկայացնելը և ասել, որ Կոնգրեսը սերտորեն աշխատում է Հայաստանի հետ նաև այս ուղղությամբ: Համաժողովի ժամանակ քննարկվել են Հայաստանում տեղական ժողովրդավարության զարգացման համատեքստում ապակենտրոնացման անհրաժեշտության մասին հարցերը, Հայաստանում վարչատարածքային բարեփոխումների ընթացքը և հետագա քայլերը:



### Հավելյալ տեղեկություններ

ԵՄՆ Նախարարների կոմիտեի կողմից 2015թ. սեպտեմբերի 15-ին հաստատված Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2015-2018թթ. ծրագրի մի ամբողջ գլուխ վերաբերում

Է տեղական ժողովրդավարությանը: 2016թ. հունիսի 9-ին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դ. Լոքյանն ու Կոնգրեսի նախագահ Ժան Կլոդ Ֆրեկոնը ստորագրել են հետմոնիթորինգային ճանապարհային քարտեզը՝ կյանքի կոչելու Հայաստանում տեղական ժողովրդավարության վերաբերյալ 2014թ. մարտի 9-ին՝ ԵՄ կոնգրեսի տեղական պալատի կողմից ընդունած 351 ռեկոմենդացիան:

ԵՄ կոնգրեսը եվրոպական քաղաքական ասամբլեա է, որի եվրոպական 47 պետությունների շուրջ 200.000 իշխանություններ ներկայացնող 648 անդամներն ընտրովի պաշտոններ են զբաղեցնում (ռեգիոնալ կամ մունիցիպալ խորհրդի անդամներ, համայնքապետներ կամ ռեգիոնալ իշխանությունների նախագահներ): Հայաստանը Կոնգրեսում ներկայացված է 4 անդամներից և 4 փոխարինողներից բաղկացած պատվիրակությամբ: Պատվիրակության ղեկավարը Հայաստանի համայնքների միության նախագահ Էմին Երիցյանն է: